

1.6. Մասնավորեցում

2017թ. հուլիսի 1-ի դրությամբ մասնավորեցվել 1331 օբյեկտ և կազմակերպություն (ընկերություն), ընդ որում՝ 1182 «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտներ ու վարձակալված տարածքներ, 73 կազմակերպություն և 76 կազմակերպությունների կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ: Նշված օբյեկտների մասնավորեցումից մուտքերը կազմել են 1957.4 մլն դրամ, որից 0.3 մլն դրամը մուտքագրվել է 2017թ. հունվար-հունիսին: Բյուջե մուտքագրված գումարների գերակշռող մասը բաժին է ընկնում ընկերությունների մասնավորեցումից մուտքերին՝ 52.8 տոկոսը և կազմում է 1033.2 մլն դրամ:

Մասնավորեցման ընթացքում պետական և համայնքների բյուջեներ կատարված մուծումների մասին

| | Ընդամենը | 1995-2009թթ. | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. | 2015թ. | 2016թ. | մլն դրամ/ 2017թ. հունվար-հունիս |
|---|---------------|---------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|------------|---------------------------------------|
| Ընդամենը | 1957.4 | 1782.1 | 51.7 | 46.7 | 35.0 | 11.8 | 10.6 | 11.9 | 7.3 | 0.3 |
| <i>այդ թվում՝</i> | | | | | | | | | | |
| Կազմակերպություններ (ընկերություն) | 1033.2 | 1004.8 | 5.2 | 2.2 | 5.4 | 5.2 | 1.4 | 6.0 | 3.0 | - |
| Կազմակերպությունների (ընկերություն) գույքի կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ «Փոքր», կիսավեր ու վարձակալված տարածքներ | 194.7 | 152.3 | 8.1 | 13.0 | 8.6 | 1.4 | 3.9 | 3.2 | 3.9 | 0.3 |
| Անավարտ շինարարության օբյեկտներ | 694.8 | 590.3 | 38.4 | 31.5 | 21 | 5.2 | 5.3 | 2.7 | 0.4 | - |
| | 34.7 | 34.7 | - | - | - | - | - | - | - | - |

1.6.1. «Փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցում

2017թ. հուլիսի 1-ի դրությամբ մասնավորեցվել է «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների 1182 օբյեկտ կամ կառավարության ծրագրով մասնավորեցման հաստատված օբյեկտների 98.9 տոկոսը:

Մասնավորեցված օբյեկտները 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ

| Ընդամենը | Օբյեկտների քանակն ըստ ծրագրի | Գնահատված օբյեկտների | | Մասնավորեցված օբյեկտների | | Մասնավորեցման կատարողականը, % |
|---------------------------------|------------------------------|----------------------|-------------------|--------------------------|-------------------|-------------------------------|
| | | քանակը | արժեքը (մլն դրամ) | քանակը | արժեքը (մլն դրամ) | |
| Ընդամենը | 1195 | 1233 | 1242.9 | 1182 | 1121.0 | 98.9 |
| <i>այդ թվում՝</i> | | | | | | |
| «Փոքր» օբյեկտներ որից՝ | 295 | 300 | 188.6 | 289 | 166.9 | 98.0 |
| <i>առևտուր</i> | 163 | 168 | 137.0 | 161 | 116.4 | 98.8 |
| <i>հանրային սնունդ</i> | 19 | 19 | 12.3 | 17 | 11.5 | 89.5 |
| <i>կենցաղսպասարկում</i> | 113 | 113 | 39.3 | 111 | 39.0 | 98.2 |
| Անավարտ շինարարության օբյեկտներ | 13 | 14 | 51.1 | 13 | 45.6 | 100.0 |
| Վարձակալված տարածքներ | 252 | 252 | 171.0 | 251 | 168.2 | 99.6 |
| Համայնք | 433 | 445 | 246.2 | 429 | 233.7 | 99.1 |
| Կիսավեր օբյեկտներ | 141 | 159 | 306.1 | 139 | 236.0 | 98.6 |
| Այլ | 61 | 63 | 279.9 | 61 | 270.6 | 100.0 |

Մասնավորեցման կատարողականի առավել ցածր մակարդակ դիտվել է «փոքր» և կիսավեր օբյեկտների մասնավորեցման գործընթացներում՝ համապատասխանաբար 98.0 և 98.6 տոկոս:

Հանրապետությունում «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցված 1182 օբյեկտներից 546-ը կամ 46.2 տոկոսը մասնավորեցվել է վարձակալների կողմից, 225-ը կամ 19.0 տոկոսը՝ աճուրդի միջոցով, 201-ը կամ 17.0 տոկոսը՝ ուղղակի վաճառվել է նախօրոք հայտնի գնորդին, 167-ը կամ 14.1 տոկոսը՝ աշխատանքային կոլեկտիվների կողմից, 42-ը կամ 3.6 տոկոսը՝ ուղղակի անհատույց տրամադրման ձևով և 1-ը կամ 0.1 տոկոսը՝ մրցութային վաճառքի ձևով:


Մասնավորեցման ընթացքն ըստ մասնավորեցման ձևերի
2017թ. հուլիսի 1-ի դրությամբ

| | Ընդամենը | | Աշխատանքային կողմնակալին | | Վարձակալին | | Ուղղակի վաճառք նախօրոք հայտնի գնորդին | | Ուղղակի անհատույց տրամադրում | | Աճուրդ | | Մրցութային վաճառք | |
|---------------------------------|-------------|------------------|--------------------------|------------------|------------|------------------|---------------------------------------|------------------|------------------------------|------------------|------------|------------------|-------------------|------------------|
| | քանակ | արժեք (մլն դրամ) | քանակ | արժեք (մլն դրամ) | քանակ | արժեք (մլն դրամ) | քանակ | արժեք (մլն դրամ) | քանակ | արժեք (մլն դրամ) | քանակ | արժեք (մլն դրամ) | քանակ | արժեք (մլն դրամ) |
| Ընդամենը | 1182 | 1121.0 | 167 | 70.1 | 546 | 310.4 | 201 | 372.6 | 42 | 272.5 | 225 | 90.6 | 1 | 4.8 |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| «Փոքր» օբյեկտներ որից՝ | 289 | 166.9 | 167 | 70.1 | - | - | 17 | 44.8 | 1 | 4.9 | 104 | 47.1 | - | - |
| առևտուր | 161 | 116.4 | 84 | 44.8 | - | - | 9 | 38.2 | 1 | 4.9 | 67 | 28.5 | - | - |
| հանրային սնունդ | 17 | 11.5 | 7 | 4.8 | - | - | 2 | 2.4 | - | - | 8 | 4.3 | - | - |
| կենցաղապատարկում | 111 | 39.0 | 76 | 20.5 | - | - | 6 | 4.2 | - | - | 29 | 14.3 | - | - |
| Անավարտ շինարարության օբյեկտներ | 13 | 45.6 | - | - | - | - | 7 | 39.4 | 1 | 3.9 | 5 | 2.3 | - | - |
| Վարձակալված տարածքներ | 251 | 168.2 | - | - | 239 | 150.2 | 3 | 12.1 | 1 | 1.2 | 8 | 4.7 | - | - |
| Համայնք | 429 | 233.7 | - | - | 307 | 160.2 | 75 | 51.6 | 13 | 11.4 | 34 | 10.5 | - | - |
| Կիսավեր օբյեկտներ | 139 | 236.0 | - | - | - | - | 57 | 123.1 | 13 | 87.7 | 69 | 25.2 | - | - |
| Այլ | 61 | 270.6 | - | - | - | - | 42 | 101.6 | 13 | 163.4 | 5 | 0.8 | 1 | 4.8 |

«Փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցումն ըստ շրջանների 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ

| Շրջաններ | Օբյեկտների քանակն ըստ ծրագրի | Գնահատված օբյեկտների քանակը | Մասնավորեցված օբյեկտների քանակը | Սեփականաշնորհման ծրագրի կատարողականը, % |
|-----------------|------------------------------|-----------------------------|---------------------------------|---|
| Ընդամենը | 1195 | 1233 | 1182 | 98.9 |
| այդ թվում՝ | | | | |
| ք.Ստեփանակերտ | 699 | 701 | 693 | 99.1 |
| Ասկերան | 81 | 84 | 80 | 98.8 |
| Հաղբուք | 37 | 41 | 37 | 100.0 |
| Մարտակերտ | 135 | 139 | 132 | 97.8 |
| Մարտունի | 121 | 130 | 119 | 98.3 |
| Շուշի | 120 | 136 | 119 | 99.2 |
| Քաշաթաղ | 2 | 2 | 2 | 100.0 |

Մասնավորեցված օբյեկտների կառուցվածքն ըստ շրջանների 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ (%)



Ինչպես նկատվում է աղյուսակում բերված տվյալներից և գծապատկերից, Ստեփանակերտ քաղաքը առաջնային դիրք է զբաղեցնում մասնավորեցված օբյեկտների քանակով՝ 58.6 տոկոս:

Հանրապետությունում մասնավորեցված 1182 «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների արժեքը կազմել է 1121.0 մլն դրամ, որից 2016թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական և համայնքների բյուջեներ մուծվել են 729.5 մլն դրամը կամ ընդհանուր արժեքի 65.1 տոկոսը: Մասնավորեցված օբյեկտներից 1151-ի գծով մուծումները լրիվ կատարվել են:

1.6.2. Կազմակերպությունների (ընկերությունների) մասնավորեցում

2017թ. հուլիսի 1-ի դրությամբ մասնավորեցման ենթակա 107 կազմակերպություններից մասնավորեցվել են 73-ը, որից 21.9 տոկոսը կամ 16-ը՝ շինարարությունում, 16.4 տոկոսը կամ 12-ը՝ սննդի արդյունաբերությունում:

Մասնավորեցված կազմակերպություններից 40-ը մասնավորեցվել է ուղղակի վաճառքով, 19-ը՝ մրցութային վաճառքով, 14-ը՝ անհատույց կարգով:

Կազմակերպությունների (ընկերությունների) մասնավորեցման ընթացքը

| Ճյուղեր | Նախատեսված է ծրագրով | Գնահատված է | | Մասնավորեցված է | | Մուծված է պետական բյուջե, մլն դրամ | |
|-----------------------------------|----------------------|-------------|------------------|-----------------|------------------|------------------------------------|----------------------------------|
| | | քանակը | արժեքը, մլն դրամ | քանակը | արժեքը, մլն դրամ | ընդամենը | այդ թվում՝ 2017թ. հունվար-հունիս |
| Ընդամենը | 107 | 87 | 14091.1 | 73 | 13583.1 | 1033.2 | - |
| այդ թվում՝ | | | | | | | |
| Էներգետիկա | 4 | 2 | 9988.0 | 2 | 9988.0 | 2.1 | - |
| Էլեկտրոտեխնիկա և ռադիոտեխնիկա | 4 | 4 | 345.9 | 3 | 98.6 | 39.8 | - |
| Թեթև արդյունաբերություն | 8 | 6 | 485.7 | 6 | 485.7 | 145.0 | - |
| Սննդի արդյունաբերություն | 13 | 13 | 991.9 | 12 | 989.5 | 337.8 | - |
| Շինարարություն | 19 | 17 | 652.7 | 16 | 649.4 | 175.9 | - |
| Շինանյութերի արտադրություն | 4 | 3 | 696.7 | 3 | 696.7 | 169.6 | - |
| Գյուղատնտեսություն | 3 | 3 | 71.0 | 2 | 66.9 | 1.1 | - |
| Ճանապարհաշինություն և շահագործում | 5 | 5 | 126.4 | 4 | 95.1 | 25.6 | - |
| Ավտոմոբիլային տրանսպորտ | 6 | 6 | 116.5 | 1 | 64.7 | - | - |
| ՆՏՄ | 10 | 7 | 175.6 | 6 | 140.6 | 44.1 | - |
| Կոմունալ տնտեսություն | 14 | 6 | 101.1 | 6 | 101.1 | 16.9 | - |
| Առողջապահություն | 3 | 3 | 49.5 | 2 | 29.1 | 16.7 | - |
| Զբոսաշրջիկություն | 1 | 1 | 5.6 | 1 | 5.6 | 4.3 | - |
| Այլ ճյուղեր | 13 | 11 | 284.5 | 9 | 172.1 | 54.3 | - |

Կազմակերպությունների մասնավորեցումից մուտքերը կազմել են 1033.2 մլն դրամ կամ մասնավորեցված օբյեկտների արժեքի 28.7 տոկոսը:

2017թ. հուլիսի 1-ի դրությամբ հանրապետությունում մասնավորեցվել է 76 կազմակերպությունների կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ, որից 16-ը՝ էլեկտրատեխնիկայի և ռադիոտեխնիկայի, 15-ը՝ թեթև արդյունաբերության, 6-ական՝ գյուղատնտեսության և կոմունալ տնտեսության, 4-ը՝ սննդի արդյունաբերության, 3-ական՝ էներգետիկայի, շինանյութերի արտադրության և կապի, 2-ական՝ ճանապարհաշինության և շահագործման, ավտոմոբիլային տրանսպորտի, լուծարված ընկերությունների գույքում, 1-ական՝ ՆՏՄ և առողջապահության, 12-ը՝ այլ ճյուղերում:

Մասնավորեցված միավորների արժեքը կազմել է 842.4 մլն դրամ, որից 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական և համայնքների բյուջեներ մուծվել են 194.7 մլն դրամը:

Կազմակերպությունների (ընկերությունների) կազմից առանձնացված միավորների մասնավորեցման ընթացքը

| Ճյուղեր | Գնահատված է | | Մասնավորեցված է | | Մուծված է պետական, մլն դրամ | |
|-----------------------------------|-------------|------------------|-----------------|------------------|-----------------------------|-----------------------------------|
| | քանակը | արժեքը, մլն դրամ | քանակը | արժեքը, մլն դրամ | ընդամենը | այդ թվում՝ 2017թ. հունվար- հունիս |
| Ընդամենը | 79 | 869.6 | 76 | 842.4 | 189.3 | 0.3 |
| այդ թվում՝ | | | | | | |
| Էներգետիկա | 3 | 8.7 | 3 | 8.7 | 2.6 | - |
| Էլեկտրոտեխնիկա և ռադիոտեխնիկա | 16 | 246.6 | 16 | 246.6 | 50.1 | - |
| Թեթև արդյունաբերություն | 15 | 67.6 | 15 | 67.6 | 25.9 | - |
| Սննդի արդյունաբերություն | 5 | 8.1 | 4 | 7.7 | 5.0 | - |
| Շինանյութերի արտադրություն | 3 | 86.0 | 3 | 86.0 | 36.6 | - |
| Գյուղատնտեսություն | 6 | 82.5 | 6 | 82.5 | 2.5 | - |
| Ճանապարհաշինություն և շահագործում | 2 | 15.6 | 2 | 15.6 | 7.2 | - |
| ՆՏՄ | 2 | 4.4 | 1 | 2.4 | 2.4 | - |
| Ավտոմոբիլային տրանսպորտ | 2 | 17.5 | 2 | 17.5 | 6.3 | - |
| Առողջապահություն | 1 | 0.0 | 1 | 0.0 | 0.0 | - |
| Կոմունալ տնտեսություն | 7 | 200.0 | 6 | 175.2 | 22.2 | - |
| Կապ | 3 | 3.6 | 3 | 3.6 | 1.2 | - |
| Լուծարված ընկերությունների գույք | 2 | 1.4 | 2 | 1.4 | 1.2 | - |
| Այլ ճյուղեր | 12 | 127.6 | 12 | 127.6 | 26.1 | 0.3 |